

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ԿԱՐԾԵՑՅԱԼ ՍՏԵՓԱՆՈՍ ՏԱՐՈՆԱՑԻՆ ՆՈՒՅՆ ԻՆՔԸ ՍՏԵՓԱՆՈՍ ՏԱՐՈՆԱՑԻ ԱՍՈՂԻԿՆ Է

Գ. Վ. ԱՅԿԱՐՅԱՆ

Հայ մատենագիրների շարքում նշվում է Ստեփանոս Տարոնացի անունով մի պատմիչ, որը, իբր, ապրել է Էդարից առաջ և գրել է մեկ չհասած մի ժամանակագրական պատմություն¹:

Հարցը հատուկ ուսումնասիրության է ենթարկել ակադեմիկոս Սա. Մալխասյանցը: Նա 1899 թ. առանձին դրքով հրատարակեց *Մոզես Խորենացու և Սերեոսի հարաբերություններին վերաբերող մի ուսումնասիրություն*², որի համարյա կեսը փաստորեն նվիրված է կարծեցյալ Ստեփանոս Տարոնացուն: Այնուհետև 1939 թ. նա կրկին անդրադարձավ հարցին և երկու նոր կտված բերելով միջոցառումներ հայտնեց, որ «այդ անունով մի տնձ, ժամանակագրության հեղինակ, գոյություն է ունեցել»³:

Խնդրի լուծումը, որին նվիրված է սույն հոդվածը, կարևոր է նրանով, որ առնչվում է հայ դասական մատենագրության նշանավոր հուշարձաններից մեկի՝ էդարում գրված «Սերեոսի Պատմության»՝ հետևաբանակարգ դեր ունի նրա նախնական բնագրի բովանդակությունն ու սահմանները որոշելու

¹ Հմմտ. Թ. Միհրգաթյան՝ Պատմություն Երեմիայի Եպիսկոպոսի ի Հերակլի, Կ. Պոլիս, 1851, էջ 28: Գ. Ջաբր հանալյան, Պատմություն հին պարսեան, Վենետիկ, 1897, էջ 294: Ն. Բիզանցյան, Իմ կարծիք գրկին հաթարգմանութեանց եկեղեցական պատմութեան Սոկրատայ Սրուատիկոսի և զնոցին թարգմանչաց: «Հ. Ամս.», 1893, էջ 276: Ա. Տեր-Միքելյան, Սամուելի քահանայի Անեցոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց..., Վաղարշապատ, 1893, էջ 253—254: Ղ. Ալիշան, Հայագատում, մասն Ա, Վենետիկ, 1901, էջ 65: Կ. Մատիկյան, Անանունը կա՞մ կեղծ Սերեոս, Վիեննա, 1913, էջ 29: Բ. Սարգիսյան, Սիմեոն Ապարանցին և կեղծ Սերեոսի անեղծվածք: «Բաղմավել», Վենետիկ, 1915, էջ 39: Ստ. Մալխասյանց՝ Սերեոսի Եպիսկոպոսի պատմություն, Երևան, 1939, էջ ԽԲ—ԽԳ: Մ. Արեգյան, Հայ հին գրականության պատմություն, հատ. 1, Սրեան, 1944, էջ 338: Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Գ, Երևան, 1948, էջ 602: Երաբելյան Ա. կթղ., Յիշատակարանք ձեռագրաց, հատ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 1—2 և այլն:

² Ստ. Մալխասյանց, Սերեոսի Պատմությունը և Մ. Խորենացի, Թիֆլիս, 1899:

³ «Սերեոսի Եպիսկ. Պատմություն», Երևան, 1939, էջ ԽԲ—ԽԳ:

⁴ Այս Պատմության հեղինակի մասին տե՛ս մեր հոդվածը՝ «Ինտոգրություններ Սերեոսի Պատմության մասին», «Բանբեր Մատենագրության», X 4, էջ 61—72: Այստեղ մենք կարծիք ենք հայտնել, որ Սերեոսի անունով հրատարակվող Պատմությունը մինչև այժմ սխալմամբ է վերագրվել Սերեոսին և որ նրա իրական հեղինակը էդարի մեկ ուրիշ պատմիչ է՝ Խոսրովը, իսկ Սերեոսի գրած «Պատմություն ի Հերակլի» աշխատությունը, որի մասին ակնարկում են միջնադարյան բաղմավել հեղինակներ, մեկ չի հասել ինչպես որ չեն հասել հայ գրավոր մշակույթի մի շարք հուշարձաններ:

գործում, մի հանգամանք, որը կողմնակիորեն վերաբերում է նաև Մովսես Խորենացուն⁵:

Քննենք կարծեցյալ պատմիչի օգտին վկայակոչված փաստերը:

Դրանցից առաջինը 1868 թ. «Արարատ» ամսագրում տպված երկու էջանոց մի ցանկ է (առաքելական հաշորդականության ցանկը)⁶, որը իբր ծաղկաբաղ է արված Ստեփանոս Տարոնացի անունով մի պատմիչից, «որ էր աշակերտ սրբոյն Մեսրոպայ»:

Ընդգծված ծանոթագրությունն ակնհայտ շփոթի արդյունք է: Հայ մատենագրությանը Մեսրոպ Մաշտոցին ժամանակակից որևէ Ստեփանոս Տարոնացի հայտնի չէ: Այստեղ խոսքը վերաբերում է ժԱ դարի նշանավոր պատմիչ Ստեփանոս Տարոնացուն, որին ցանկն ընդօրինակող գրիչը սխալմամբ անվանել է Մեսրոպ Մաշտոցի աշակերտ:

Թյուրիմացությունը, մեր կարծիքով, բխում է «Յայամաւորքից»⁷, որտեղ Մեսրոպ Մաշտոցի աշակերտների շարքում նշվում է Ստեփանոս Ասողիկ անունով մեկը: Գիտենք, որ Ասողիկ-ը ժԱ դարի պատմիչ Ստեփանոս Տարոնացու մականունն է: Ահա այս հանգամանքը առիթ է հանդիսացել, որպեսզի ցանկը կազմող գրիչը Ստեփանոս Տարոնացի Ասողիկին համարի Մեսրոպ Մաշտոցի աշակերտ:

Կարծեցյալ պատմիչի օգտին վկայակոչված երկրորդ կովանը ժԸ դարի մատենագիր Ստեփանոս Թոշրյանի բառարանն է:

Մալխասյանցը հենվելով Ալիշանի մի ցուցմունքի վրա⁹ գտնում է, թե Թոշրյանի բառարանում հիշատակվում է է դարից առաջ ապրած մի Ստեփա-

⁵ Ն. Աղոնցը (Начальная история Арменни..., տպվ. «Визант. врем.», 1901, т. VIII вып. 1—2, էջ 104), Ն. Մանանդյանը (Нач. ист. Арменни Мар Абаса..., —Палестин. сборник», вып. 2 (64—65), 1956, էջ 74—88) և ուրիշներ կարծեցյալ Ստեփանոս Տարոնացու հիշատակությունը պարունակող բնագիրը, այսինքն «Սերեոսի Պատմության» առաջին մասը (Ա—Դ գլուխները) համարելով է դ. պատմիչ Սերեոսի գործ և այնտեղ նկատելով նմանություններ Խորենացու Հայոց պատմության հետ, գտել են, որ Խորենացին օգտվել է Սերեոսից, հետևաբար ապրել է է դարից հետո: Ներկա հոլովածում ցույց է տրվում, որ խնդրո առարկա բնագիրը չի կարող որևէ դեր խաղալ Խորենացու ժամանակի հարցում, քանի որ այն կապ չունի «Սերեոսի Պատմության» հետ:

⁶ «Արարատ», Վաղարշապատ, 1868, էջ 104—105:

⁷ Հմմտ. Հ. Վ. Տ ա շ յ ա ն, Ցուցակ հայերեն ձևագրաց..., Վիեննա, 1895, էջ 60, 94, 344 և այլուր:

⁸ Առաջին դեպքը չէ, երբ գրիչները Մեսրոպ Մաշտոցին աշակերտ են համարում նրանից դարեր հետո ապրած մարդկանց: Նույն թյուրիմացությանն են ենթարկվել նաև Ը դարի փիլիսոփա Ստեփանոս Սյունեցին, որը համարվել է նաև Մովսես Խորենացու աշակերտ (Հմմտ. Մատենագիտական բնագրեր, տպված՝ Հ. Ս. Ա ն ա ս յ ա ն, Հայկական մատենագիտություն, հատ. Ա, Երևան, 1959, էջ XLIV, LXVIII), թոնդրակեցիների ժամանակակից խաչիկ վարդապետը (Հմմտ. Մ ի ա ռ ա ն, Հայկական, էջմիածին, 1899, էջ 74), Ժ դարի պատմիչ Թովմա Արծրունին (Հմմտ. անդ) և ուրիշներ:

Անվանի ձևագրագետներ Գ. Տեր-Մկրտչյանը (Հայկական, էջ 74), Ն. Աղոնցը (Нач. ист. Арменни у Себеоса..., էջ 68), Գ. կթղ. Հովսեփյանը (Յիշատակարանք, էջ 1—2) «Արարատում» տպված ցանկը (որը պարունակած Անագիրը մինչև օրս էլ մնում է անհայտ) համարում են անվավերական մի բնագիր: Եվ հիմա, այն չի կարող ծառայել որպես առիթ կովան՝ կարծեցյալ պատմիչի գոյությունը հաստատելու համար: Եթե նույնիսկ հավատանք ցանկի վավերականությանը՝ սպա պետք է ենթադրել, որ նրա համար հիմք ծառայած բնագիրը գտնվելիս է եղել Ասողիկի «Տիեզերական պատմության» սկզբնական բնագրում (որը մեզ հասել է պակասներով) կամ էլ՝ շարադրված է եղել ուղանձին:

⁹ Ղ. Ա լ ի շ ա ն, Հայագրաբանություն, հատ. Ա, էջ 65:

նոս Տարոնացի: Սա թյուրիմացության արդյունք է: Նշված բառարանում Ստեփանոս Տարոնացի անունով պատմիչ չկա¹⁰:

Երրորդ փաստը դարձյալ Ալիշանի միջոցով եկող մի տեղեկություն է: Ալիշանը «Հայապատումում» (մասն Ա, էջ 65) գրում է, թե «պատմչաց շարադասող մեկն երկու Ստեփանոս հիշէ, զատ անձինք համարելով զԱսողիկն և զՏարոնացին»: Սա նույնպես թյուրիմացության հետևանք է: Ալիշանին հայտնի «պատմչաց շարադասողի» ցանկը նույն «Հայապատումում» (մասն Ա, էջ 13—14) տպված «Ցանկ պատմագրաց հայոցն» է: Այստեղ, հիրավի, նշված են երկու Ստեփանոսներ, երկուսն էլ կողք-կողքի: Բայց պետք է նկատել, որ երկուսն էլ հիշատակված են որպես Ժ—ԺԱ դդ. պատմիչներ, հետևյալ հերթականությամբ. «Թումա վարդապետ տանն Արծրունեաց, Շապուհ Բագրատունի, Տէր Յովհաննէս Բառնեցի, Մովսէս Կաղկանտովացի, Ստեփանոս անուանեալ Ասողիկ վարդապետ, Ստեփանոս Տարոնեցի, ի խնդրոյ տեառն Սարգսի կաթողիկոսի, Արիստակէս Լասղիվարդեցի» և այլն: Միաժամանակ տեսնում ենք, որ ցուցակում Ասողիկից զատ նշված Ստեփանոս Տարոնացին իր Պատմությունը գրել է «ի խնդրոյ տեառն Սարգսի կաթողիկոսի»: Այս կաթողիկոսն ասլբէլ է, ԺԱ դարում և այն անձնավորությունն է, որի պատվերով հենց գրել է Ասողիկն իր «Տիեզերական պատմությունը»: Ուրեմն Ստ. Տարոնացին և Սա. Ասողիկը միևնույն անձնավորություններն են, որոնք գրչի շփոթի հետևանքով դարձել են տարբեր մարդիկ:

Կարծեցյալ պատմիչի օգտին բերվող չորրորդ և վերջին փաստը՝ է դարի պատմիչ Սերեոսին վերագրվող Պատմությունում Ստեփանոս Տարոնացու անվան հիշատակությունն է: Սա փաստերից ամենակարևորն է և կազմում է մեր հոգվածի հիմնական նյութը:

«Սերեոսի Պատմության» Գ դիսի խորագրում կարդում ենք. «Արդ թէ պիտոյ է քեզ, ո՛վ ընթերցասէր, երկրորդեցից ի պատմագրացն Մովսիսի Խորենացու»¹¹ և Ստեփանոսի ծառանագլու՝ հառաստի և ճշմարիտ մատենագրաց»¹²:

Այս խոսքերից անմիջապես հետո բերվում է մի քաղվածք, որը բառացիորեն արտադրված է Ստեփանոս Տարոնացի Ասողիկից: Սրանից ելնելով՝ շահասերները բնականաբար եզրակացրել են, որ քաղվածքը թյուրիմացաբար է հայտնված է դարի սկզբնաղբյուրում, և խորագրում հիշատակված Ստեփանոս Տարոնացին նույն ինքր ԺԱ դ. պատմիչ Ստեփանոս Տարոնացին է (Ասողիկը)¹³:

Գիտնականների մի այլ խումբ (Մալխասյանց և այլք), սակայն, լրիվ

¹⁰ Հմմտ. «Բաղմավէպ», Վենետիկ, 1852, էջ 91: Այստեղ կա Ստեփանոս (ոչ Տարոնացի) անունով մի պատմիչ, որի ինքնությունը և ժամանակը հայտնի չէ:

¹¹ Քաղվածքում անմիջապես Խորենացուց վերցված ոչինչ չկա, բայց հեղինակը նշել է նաև նրա անունը՝ նկատի ունենալով, որ Ստեփանոս Տարոնացուց բերված հատվածն ամբողջությամբ ծագում է Խորենացուց: Հմմտ. է. Ա. Д о н ц, Нач. ист. Армении..., էջ 69:

¹² «Սերեոսի եպ. Պատմություն», էջ 11:

¹³ Հմմտ. Ք. Պատկանյան, История императора Пракла, сочинение Себеоса, писателя VII в., СПб, 1862, VII—IX: ն. Աղոնց, Նշվ. աշխ., էջ 66, 68: Հ. Հյուբշման, Zur Geschichte Armeniens und der ersten Kriege der Araber, Leipzig, 1875, S. 5: Գ. Халатянц, Армянский эпос в Истории М. Хоренского, Москва, 1896, էջ 38: Ստ. Մալխասյանց՝ Ստ. Տարոնեցու Ասողիկան Պատմություն տիեզերական, Ս.Պր., 1885, էջ 321, ծան. 2 և այլն:

վստահելով «Աերեոսի Պատմութեան» ընկերին, ենթադրել է, թե խորագրում հիշված պատմիչը Ասողիկը չէ, այլ՝ մեկ ուրիշը, որից իր օգտվել է Սերեոսը։ Հիշմարտութունը պարզելու նպատակով ընկեր Գ զլխի քաղվածքը, որն Ասողիկի «Տիեզերական պատմութեան» ընկերի համեմատությամբ ունի հետևյալ տեսքը.

Ստեփանոս Տարոնացի

(Սերեոսի եղբ. Պատմութիւն, Երևան, 1939, էջ 11—12)

...Արդ՝ այսպէս զատուցեալ երեւին երկու ցեղքն թագաւորութեանց Պարսից և Հայոց։

Արշակ քաջ նախնեաց երկուց ցեղից՝ թագաւորեցելոյ Պահլաւեանին և Արշակունւոյն, ամենայն քաջութեամբ թագաւորեաց ամս ԾԷ։ Յետ որոյ որդիքն զատուցեալք թագաւորք Պարսից. Արշակ Մեծ՝ ամս ԾԲ։ Արշական՝ ամս Լ։ Արշանակ՝ ամս ԼԲ։ Արշէս՝ ամս Ը։ Արշաւիր՝ ամս ԽԶ։ Արտաշէս՝ ամս ԼԱ։ Դարեհ՝ ամս Լ։ Արշակ՝ ամս ԺԹ։ Արտաշէս՝ ամս Ի։ Պերոզ՝ ամս ԼԴ։ Վաղարշակ՝ ամս Ծ։ Արտաւան՝ ամս ԼԶ։

Ջսա սպանեալ Ստահրացւոյն Արտաշրի որդւոյ Սասանայ՝ Երարծ զտէրութիւն Պահլաւաց, յերկրորդ ամին Փիլիպպեալ թագաւորին՝ Հռոմայ։ Աստանօր զաղարէ թագաւորութիւնն Պարսեւաց յազգէն Պահլաւագ¹⁴, սկսեալ յերեսուն ամի թագաւորութեանն Փիլեգելփոս Պողոմէոսի, կալեալ նոցա ընդ ամենայն ամս՝ ՆԾԷ։

Յետ որոյ նուաճեալ Ստահրացւոյն Արտաշրի որդւոյ Սասանայ զամենայն Արիս և ղԱնարիս, և զբազումս ի նոյն ազգէ, թագաւորութեան Պարթեւաց և Պահլաւաց՝ թագաւորէ ինքն և յետ նորա պաշտօնատէր նորին զնոյն ձև օրինակի։

Ինչպէս տեսնում ենք, արտագրութեան փաստն այնքան ակնհայտ է, որ ի թե նույնիսկ գոյութիւն ունեցած լինի Ասողիկից բացի մեկ ուրիշ Ստեփանոս Տարոնացի՝ դարձյալ նա չի կարող կապ ունենալ Գ զլխի հետ, որովհետև այստեղ արտագրութիւնը կատարված է անառարկելիորեն Ասողիկից։

Ստեփանոս Տարոնացի

(Տիեզերական Պատմութիւն, Ս. Պ. Բուրգ, 1885, էջ 31—32)

...Արդ՝ այսպէս զատուցեալ երեւին երկու ցեղքն թագաւորութեանց Պարսից և Հայոցն։

Արշակ քաջ նախնեաց երկուց ցեղից՝ թագաւորեցելոյ Պահլաւեանին և Արշակունւոյն ամենայն քաջութեամբ թագաւորեաց ամս ԾԷ։ Յետ որոյ որդիքն զատուցեալք թագաւորք Պարսից. Արշակ Մեծ՝ ամս ԾԲ։ Արշական՝ և, Արշանակ՝ ամս ԼԲ։ Արտաշէս ամս Ի։ Արշաւիր ամս ԽԶ։ Արտաշէս ամս ԼԱ։ Դարեհ՝ ամս Լ։ Արշակ՝ ամս ԺԹ։ Արտաշէս՝ ամս Ի։ Պերոզ՝ ամս ԼԴ։ Վաղարշակ՝ ամս Ծ։ Արտաւան՝ ամս ԼԶ։

Ջսա սպանեալ Ստահրացւոյն Արտաշրի որդւոյ Սասանայ՝ Երարծ զտէրութիւնն Պահլաւաց, յերկրորդ ամին Փիլիպպեալ թագաւորին Հռոմայ։ Աստանօր զաղարէ թագաւորութիւնն Պարթեւաց յազգէն Պահլաւաց սկսեալ յլ (=յերեսուն) ամի թագաւորութեան Փիլեգելփոս Պողոմէոսի, կալեալ սոցա ընդ ամենայն ամս ՆԾԷ։

Յետ որոյ նուաճեալ Ստահրացւոյն Արտաշրի, որդւոյն Սասանայ զամենայն Արիս և ղԱնարիս, և զբազումս ի նոյն ազգէ, թագաւորութեանն Պարթեւաց և Պահլաւաց՝ թագաւորէ ինքն և յետ նորա պաշտօնատէր նորին զնոյն ձև օրինակի։

¹⁴ Ընդգծված տողերի մասին՝ տես.

Համաձայնությամբ անտեղյակ լինելով ձեռագրական աշխարհում հանդիպող այսպիսի թյուրիմացություններին, երբ իրար են խառնված լինում ամենատարբեր հեղինակների գործեր¹⁾, «Աերևոսի Պատմության» առաջին հրատարակողը՝ Բաղևոս Միհրդատյանը է գարի սկզբնաղբյուրի հետ խառն հրատարակել է դարեր հետո ապրած մի անհայտ հեղինակի գործ, որտեղ արտագրություն է կատարված Ասողիկից: Նրա թյուրատեսությունը հետևանքով կյանքի է կոչվել մի անիրական պատմիչ: Տպագրական ուժ ստացած այս թյուրիմացությունը թափանցել է բանասիրական գրականության մեջ և կողմնակիցներ շահել:

Միաժամանակ հնարավոր չի եղել անտեսել այն բացարձակ նույնությունը, որ գոյություն ունի «Աերևոսի Պատմությանը» հետագայում միացված հատվածի և Ստեփանոս Տարոնացի Ասողիկի բնագրի միջև:

Այս փաստի բացատրությունը որոնելիս ոմանք (Գր. Խալաթյանց, Ն. Ադոնց, Ն. Ակինյան) կարծիք են հայտնել, թե հատվածը հետագա գրիչների կողմից «Աերևոսի Պատմությանը» գիտակցաբար կցված մի ներմուծում է՝ բաղված Ասողիկից: Մյուսները (Մալխասյանց և այլք) հատվածների նմանությունը բացատրել են՝ ենթադրելով, թե Ասողիկն է արտագրել Աերևոսից:

Երևականությանը չեն համապատասխանում ո՛չ առաջին, ո՛չ էլ երկրորդ տեսակետները: Առաջինի հեղինակները չեն նկատել, որ Գ զլխում Ասողիկից բնօրինակված հատվածը չի կարող ներմուծում համարվել, որովհետև սերտ կապի մեջ է նախորդ և հաջորդ գլուխների (իմա՝ Ա—Գ գլուխների, նախորդ հրատարակություններում՝ «Ա և Բ գլուխներին»), որ բանասիրությանը հայտնի են որպես Անանունի գործ) հետ և նրանց հետ միասին պետք է գիտվի կամ որպես Աերևոսի ստեղծագործություն, կամ էլ՝ Ասողիկից հետո ապրած հեղինակի գործ: Տարօրինակ է մտածել, թե ինչ-որ շարքային գրիչ կրնա հատեր դասական հեղինակի գործը և մի գլուխ էլ ինքը կավելացնեն այնտեղ այդ մասին բացարձակ հայտարարելով՝ «Արդ թէ պիտոյ է քեզ, ով ընթերցասէր, երկրորդեցից ի սրտամագրացն Մովսիսի Խորենացույ և Ստեփանոսի Տարոնացույ»:

Այս խոսքերն ասում են, որ նախորդ բնագիրն էլ պատկանել է միևնույն հեղինակին: «Արդ» բառով չէր կարող նոր բնագիր սկսվել: Նույնը կարելի է ասել նաև հաջորդ վերնագրի կապակցությամբ, որտեղ հեղինակը միևնույն «ընթերցասերին» նկատի ունենալով՝ գրում է. «Նա ևս էրկակի կանչնաւ զՊարսից և զԾունաց հաստատելով նշանակեցից զթագաւորութեան ժամանա-

¹⁾ Տպագիր գրականության մեջ թափանցած նման մի շվոթի արդյունք է ժ գարի մասնագիր Բեարոս Վաչոյձորեցու «Պատմության» Մագրոսի 1765 թ. հրատարակությունը, որտեղ իրար են խառնված այս մասնագրի և ԺԴ գարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի երկերը: Այդպիսի մի օրինակ է նաև Սիմեոն Ապարանցու ձեռքի տակ գտնված ձեռագիրը, որտեղ Վաչար Փարպեցու «Պատմության» հետ խառն բնօրինակված է եղել նաև այժմ «Աերևոսի Պատմությանը» կից բնագրիված հատվածը (մանրամասն տե՛ս Ն. Ա. Կ. Ի. Ն. Յ. Բաղևոսի գաղափար, Վիեննա, 1952, էջ 142—143, 148—149): Տարբեր բնագրերի միախառն բնօրինակության ցայտուն օրինակ է նաև մեր Մատենադարանի N 515 ձեռագիրը, որտեղ որպես միևնույն հեղինակի գործ բնօրինակված են չորս տարբեր բնագրեր՝ Սահմեղի պատմությունը, Կիրակոս Գանձակեցու Պատմությունից մի հատված, Հովհաննես Թլկուրանցու մի տաղը և «Պատմություն Քաջին Լիպարաի» ժողովրդական գրույցը: Անհետաքրքիր չէ նշել նաև, որ Մատենադարանի մեկ այլ ձեռագրում (N 6228, թ. 77ր) իրար են խառնվել է գարի գիտնական Անանիա Շիրակացու Էրկր և վրացական մի սկզբնաղբյուրից՝ «Փարթիս ցխովբերայի» հայերեն թարգմանությունից մի հատված: Նման օրինակները բազմաթիվ են:

կրնա: Այնպես որ Ստեփանոս Տարոնացուց վերցված քաղվածքը պարունակող գլուխը հանդիսանում է անբաժան մասն ամբողջ բնագրի (Ա—Ե գլուխների) և չի կարող զիջվել որպես ներմուծում, ոչ էլ որպես Սերևոսի գործ:

Պնդելով, որ Գ զլխում Ստեփանոս Տարոնացու անվան տակ զետեղված հատվածը Սերևոսն ինքն է շարագրել՝ Մալխասյանցը բնականորեն պետք է փորձեր գտնել կարծեցյալ Տարոնացուց վերցված հատվածը Ե զլխում: Նույնպիսի հատված է համարել հայ, սլավոնիկ և բյուզանդացի թագավորների եռանուն կանոնը¹⁶:

Սրանով անտեսվել է ն. Աղոնցի կողմից արգեն վաղուց նկատված այն փաստը, որ Ե զլխի բնագիրը խախտված է, և Ստեփանոս Տարոնացու անունը կրող վերնագիրը վերաբերում է միայն Ստեփանոս Տարոնացի Ասողիկի քաղված հատվածին:

Հանրահայտ իրողություն է, որ Սերևոսին վերագրվող Պատմությունը մեղ հասել է աղճատված վիճակում: Բանասերները, և ամենից առաջ Մալխասյանցը, ձեռագրում նկատելով նյութերի ետևադասությունը՝ բնագիրը հրատարակել են կարգավորելուց հետո: Այնուհանդերձ դեռ մնում են չկարգավորված տեղեր, որոնցից մեկն է, ահա, Գ զլուխը: Թերթի կորստյան պատճառով¹⁷ այստեղ իրար են խառնված երկու տարբեր վերնագրերի տակ զետեղված բնագրեր՝ Ասողիկի հատվածը և եռանուն կանոնը¹⁸: Մեր կարծիքով, այս կորած Թերթի վրա գրված է եղել Գ զլխի վերջը և եռանուն կանոնի սկիզբն իր վերնագրով հանդերձ¹⁹:

Որ այս երկու բնագրերը (Ասողիկի քաղված Պարթևաց ցանկը և եռանուն կանոնը) նախնական բնագրում գտնվելիս են եղել տարբեր վերնագրերի տակ՝ երևում է հետևյալ փաստերից.

16 Այս ցանկը համեմատելով 1868 թ. «Արարատում» տպված առաքելական հաջորդության ցանկի հետ՝ Մալխասյանցը բնահանրություն է տեսնում նրանց մեջ: «Երկուսն էլ ժամանակագրական ցանկեր են,— գրում է նա,— երկուսն էլ պատմական նյութով ազրատ, երկուսն էլ թե՛ հաջորդությունների և թե՛ տարիների թվերի ճշտության կողմից կասկածելի» (Սերևոսի պատմությունը և Մ. Խորենացի, էջ 57): Գծվար չէ նկատել, որ այս բնահանրությունները հասել են ժամանակագրական բնույթի չուղարանչյուր երկի: Նրանք բոլորն էլ պատմական նյութով ազրատ են և թվերի ճշտության կողմից միշտ էլ ստուգելի:

Մալխասյանցն ինքը «Արարատում» տպված ցանկում նշում է հին գրքերի համար անորոշոր բերականական ձևեր. «Աչքի է ընկնում սուրա ձևի գործածությունը, փոխանակ սմա կամ զսա ձևերի. և հաճախ աննախդիր հայցականի գործածությունը փոխանակ զ նախորդ հայցականի» (նույն տեղում, էջ 56): Ընդամենը երկու էջանոց ցանկում այսպիսի հաճախ հանդիպող բերականական անկանոնություններն էլ բավական են բնագրի ժամանակը որոշելու համար: Ինչ վերաբերում է ցանկում հանդիպող անձնանունների հին ուղղագրությանը, որը մասնաձևում է Մալխասյանցը, դա միայն հին բնագրերի մեկնաշնորհը չէ:

17 Կորած Թերթի գոյությունը չի ժխտում ինքը Մալխասյանցը: Տե՛ս Ս. Մ. Մալխասյանց, Սերևոսի պատմությունը և Մ. Խորենացի, էջ 102—103, նաև՝ «Սերևոսի էպ. Պատմություն», էջ 171—172: Հմմտ. նաև Н. Адоиц, Начальн. ист. Армении..., էջ 66, 68:

18 Ե զլխին չի պատկանում նաև նախորդ ոլխից այստեղ ընկած Մամիկոնյանների հատվածը (այս մասին՝ առանձին):

19 Թերթի կորստյան պատճառով միևնույն վերնագրի տակ հայտնված տարբեր գլուխների բնորոշ օրինակ է տալիս նաև Թովմա Արծրունու «Պատմությունը»: Այստեղ բնահանուր խորագրի տակ են հայտնվել ոչ միայն տարբեր գլուխներ, այլև երկու առանձին հեղինակների աշխատություններ՝ Թովմա Արծրունու և նրա տնանուն շարունակողի գործերը: Այս մասին հմմտ. Հ. Մարկվարտ, Պարսկահայր նահանգը, «Պատմա-բանասիրական հանդես» Երևան, 1961, № 1, էջ 195—197:

Ա. Պարթևաց ցանկն իրենից ներկայացնում է մի սովորական միատարր-
ցանկ, որտեղ հաջորդաբար թվարկվում են միևնույն երկրի թագավորները.
դրան հակառակ եռանուն կանոնը՝ հայոց, պարսից և բյուզանդացոց թագա-
վորների հաջորդությունը ցույց տվող մի համաժամանակյա (սինխրոնիկ)
աղյուսակ է: Այսպիսի աղյուսակները հեղինակը զետեղած է եղել առանձին
վերնագրերի տակ, ինչպես այդ տեսնում ենք երկանուն կանոնի դեպքում, որի
վերնագիրն արգեն մեզ ծանոթ է. «Եւ առդ երկակի կանոնաւ զՊարսից և զՅու-
նաց հաստատելով նշանակեցից զբազաւորութեան ժամանակն»: Ինքնըստինք-
յան հասկանալի է, որ երկանուն կանոնը (որը եռանուն կանոնի նման համա-
ժամանակյա աղյուսակ է) առանձին վերնագրի տակ զետեղող հեղինակը
նույն կերպ կվարվեր նաև եռանուն կանոնի դեպքում, այն անջատելով Պար-
թևաց միատարր ցանկից:

Բ. Ներկա Բ գլխում երկու անգամ հանդիպում ենք միևնույն իրադարձու-
թյան (Սասանյան հարստության հիմնադրման) հիշատակությանը, մեկ՝ Ասո-
ղիկի քաղվածքում, մեկ էլ՝ Եռանուն կանոնում: Անշուշտ, ավելի բնական կլի-
նէր, եթե այս միևնույն տեղեկությունները զետեղված լինեին տարբեր վեր-
նագրերի տակ: Մեր կարծիքով այդպես էլ եղել է:

Նշված տեղեկություններն են. Ասողիկի քաղվածքում՝ «Զսա (Պարթևաց
թագավոր Արտավանին—Բ. Ա.) սպանեալ Ստահրացոյն Արտաշրի՝ որդւոյ
Սասանայ՝ երարձ զտէրութիւն Պահլաւաց յերկրորդ ամին Փլիլպպեա, քա-
ղաւորին Հոռմալ: Աստուծօր պաղարէ քաղաւորութիւնն Պարթևաց յազգէն
Փանլաւկաց²⁰, սկսեալ յերեսուն ամի թագաւորութեանն Փիլեգելիոս Պտղո-
մէոսի, կալեալ նոցա ընդ ամենայն ամս՝ Նմէ: Յետ որոյ նուաճեալ Ստա-
հրացոյն Արտաշրի որդւոյ Սասանայ զամենայն արիս և զանարիս և զբազումս
ի նոյն ազգէ թագաւորութեան Պարթևաց և Պահլաւաց՝ թագաւորէ ինքն և յետ
Նորա պայազատք նորին զնոյն ձև օրինակի»²¹: Նույն տեղեկությունը հայտ-
նվում է նաև եռանուն կանոնում, որպես նոր սկսվող տեղեկություն. «Եւ եղև
յետ մահուանն Արտեանայ, որդւոյ Վաղարշու արքային Պարթևաց, թագաւո-
րեաց Արտաշրի՝ որդի Սասանայ միահեծան տէրութեամբ ի վերայ բարեկացոց
և Ասորւոց և Մարաց և Պարսից և Պարթևաց»²²:

Բ. Ըստ պարթևաց ցանկի՝ Սասանյան հարստությունը հիմնվել է «յերկ-
րորդ ամին Փլիլպպեայ քաղաւորին Հոռմայ», իսկ եռանուն կանոնում այդ
մասին հայտնվում է. «Յամի երրորդի Նդիանոսի կայսեր և յամս ի-երրորդի
առաջի Մեծի Խոսրովայ արեւելին Հայոց՝ փոփոխումն թագաւորութեան այսո-
րիկ լեալ»²³:

Այս հակասական տվյալները, անկասկած, պետք է իրարից բաժանված
լինեին մի վերնագրով, որտեղ հայտնված լինէր, որ երկրորդ տեղեկությունը
բերվում է ըստ ուրիշ սկզբնաղբյուրների: Այնպես հնարավոր չէր, որ հեղի-
նակը միևնույն գլխում մեկ հայտնէր, թե Սասանյան թագավորությունը հիմ-
նվել է Փիլիպպոսի ժամանակ, մեկ էլ՝ Նդիանոսի:

²⁰ Հիշենք, որ քննարկված բառերը Դ գլխի բնագրում պահպանում են. քննօրինակող գրիչը
արտադրության ընթացքում սխալմամբ բառ է թողել. մենք վերականգնել ենք Ասողիկի «Տիլե-
զերական պատմության» հիման վրա: Այս մասին ավելի մանրամասն տեղեկ.

²¹ «Սեբեկոսի եպ. Պատմութիւն», էջ 12:

²² Նույն տեղում, էջ 14:

²³ Նույն տեղում:

Նշված փաստերի ուժով եռանուն կանոնը դուրս է գալիս Գ զլխի կազմից և Ստեփանոս Տարոնացուն դարձյալ մնում է Ասողիկին համապատասխանող հատվածը:

Այս բնագիրը Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» հետ համեմատելիս նկատում ենք, որ ժամանակագրական տվյալներն ու թագավորների հաջորդականությունը վերաբերող տեղեկությունները վերցված են Խորենացուց: Սրանից ելնելով Մալխասյանցը իրավամբ եզրակացրել է, որ հատվածը կազմված է Խորենացու «Հայոց Պատմության» հիման վրա: Մնում էր պարզել, թե ո՞վ է անմիջապես Խորենացուց օգտվողը՝ Գ զլխի հեղինակը, թե Ասողիկը: Մալխասյանցը, ինչպես տեսանք, առաջնությունը տվել է Գ զլխի հեղինակին, Ասողիկին հանդես բերելով վերջինիս արտագրողի դերում:

Ստորև բերվող համեմատությունը, սակայն, ցույց է տալիս, որ Մովսես Խորենացուց անմիջապես օգտվողը Ասողիկն է, իսկ Գ զլխի հեղինակն օգտվել է Ասողիկից:

Մ. Խորենացի	Աս. Ասողիկ	«Աերեոսի Պատմության» Գ զլուխ
Յետ վաթսուն ամի մահուանն Աղեքսանդրու	Ի վաթսուն ամի զկնի վախճանի Աղեքսանդրի...	Յետ մահուանն Աղեքսանդրու
Թագաւորէ Ի վերայ Պարթեաց Արշակ քաջ Ի քաղաքն որ կոչի Բահղ Առաւատին չերկրին Քուշանաց...	Թագաւորէ Ի վերայ նոցա Արշակ քաջ Ի Բահղ Գահաստանի չերկրին Քուշանաց...	Թագաւորէ Արշակ քաջ Ի Բահղ Գահաստանի չերկրին Քուշանաց կեցեալ ամս ճէ,
Թագաւորաց (Արշակ - Գ. Ա.) ամս երեսուն և մի և ևս նորա որդի նորին Արտաշէս ամս քսան և վեց (գումարը տալիս է ԾԷ) ²⁴	Թագաւորէ ընդ ամենայն ամս ԾԷ:	Թագաւորէ ամս ԾԷ:
Ապա Արշակ նորին որդի որ կոչեցաւ Մեծ ամս չիսուն և երեսուն... Թագաւորեցուցանէ զեղբայր իւր Վաղարշակ ի վերայ մերոյ աշխարհիս ²⁵	և ևս սորա Թագաւորէ սորին որդի Արշակ որ կոչեցաւ Մեծ (ամս ԾԸ, տե՛ս էջ 31)... Թագաւորեցուց զեղբայր իւր զՎաղարշակ ի վերայ աշխարհիս Հայոց ²⁶	Յետ նորա Թագաւորէ նորին որդի Արշակ որ կոչեցաւ Մեծ ամս ԾԹ: սա Թագաւորեցուց զեղբայր իւր զՎաղարշակ ի վերայ աշխարհիս Հայոց ²⁷ :

24 Ասողիկն այստեղ տարբեր է Խորենացուց նրանով, որ միանգամից գումարում է նրա նշած տարիները և նշում ընդհանուր թիվը՝ ԾԷ: Այս տարբերության պատճառը, ինչպես նաև մի երկու այլ տվյալներ բացատրել է Ստ. Մալխասյանցը: Տե՛ս «Աերեոսի պատմությունը և Մ. Խորենացին», էջ 39—41:

25 Խորենացուց օրինակները բերել ենք ըստ Մալխասյանցի հիշյալ աշխատության (էջ 36):

26 «Ստեփանոսի Տարոնացույ Ասողիկան Պատմութիւն Տիեզերական», ՍՊԲ, 1885, էջ 29—30:

27 «Աերեոսի եպ. Պատմութիւն», էջ 11:

Այստեղ հորենացու և Ասողիկի բնագրերը մի քանի տեղ կրճատված են (ցույց ենք տվել լրացման համարում), որից հետո նոր համադասարանում են Գ գլխի հատվածին: Սա նշանակում է, որ Գ գլխի հեղինակն իր բնագիրը կազմել է Ասողիկին կրճատելու միջոցով: Իսկ կրճատել նա կարող էր միայն Ասողիկի գիրքը ձեռքի տակ ունենալուց հետո:

Բացի համադասության մեջ երեսուցուց լրացված պատկերից՝ Գ գլխի հեղինակի տարբերությունը հորենացուց և Ասողիկից ցույց են տալիս նաև երկու կարևոր պատմական տեղեկություններ: Նախ՝ ըստ Գ գլխի՝ Արշակ Քաջն ասուբել է ՃԼ (130) տարի, որի մասին չգիտեն ո՛չ հորենացին, ո՛չ էլ Ասողիկը, և երկրորդ՝ հորենացին և Ասողիկն ունեն տեղեկություն այն մասին, որ Արշակ Քաջը թագավորել է Աղեքսանդրի մահվանից 60 տարի հետո, իսկ Կ գլխի հեղինակն այս տեղեկությունը չունի:

Երբ 60 տարվան վերաբերող տեղեկությունը հայտնելուց հետո (էջ 32) Ասողիկը կրկին անդրադառնում է նույն իրողությանը՝ տեսնում ենք, որ նա անառարկելիորեն օգտվել է հորենացուց (և ոչ՝ Գ գլխի հեղինակից): Այսպես, հայտնելով, որ իր խոսքը միևնույն ղեկքի մասին է («որպես ասացաք»), նա այս անգամ խոսում է ոչ թե առաջվա նման սեփական շարադրությամբ՝ վերապատմելով իր գիտեցածը (որի ընթացքում, օրինակ, նա հորենացու Բանդ Առաւաթին-ը դարձրել էր Բանդ Շահաւաթանի), այլ՝ ուղղակի նաչելով հորենացու Պատմությանը և լրացնելով արձագանքով հատվածը:

Մ. հորենացի (Գիրք Բ. գլ. Բ)	Ստ. Ասողիկ («Տիեզ. պատմ.», էջ 31)	Կ գլխի հեղինակ («Աերեսի պատմ.», էջ 11)
Յետ վաթսուհի ամի մահուանն Աղեքսանդրի թագաւորէ	Յետ վաթսուհի ամի մահուանն Աղեքսանդրի թագաւորէ	Յետ մահուանն Առեք- սանդրու թագաւորէ
ի վերայ Պարթեաց Արշակ Քաջ	ի վերայ Պարթեաց Արշակ Քաջ	Արշակ Քաջ
ի քաղաքին որ կոչի Բահդ Առաւաթին	ի քաղաքին որ կոչի Բահդ Առաւաթին	ի Բահդ Շահաւաթանի լերկրին քաղանաց
լերկրին Քաղանաց	լերկրին Բաղանաց:	կեցեալ ամս ճԼ:

Մեկնարանությունն ավելորդ է:

Ասողիկի «Տիեզերական պատմության» վրա Կ գլխի հեղինակի կատարած աշխատանքն այնքան ակնհայտ է, որ հեղուկությամբ կարելի է հետևել նրան: Այսպես, նույնտեղ ունենալով արտագրել միայն Պարթեաց թագավորների անունները և նրանց հաջորդականությունը ցույց տվող տարեթվերը՝ Կ գլխի հեղինակը Ասողիկի բնագրից բաց է թողել ղեկքերի նկարագրական մանրամասնությունները, մինչև որ կրկին հանդիպել է անունների ու թվերի և կրկին ղեկքերի իր ցանկի մեջ: Ոչ մի տեղ նա Ասողիկի բնագրից մի քանի հետո չի դնացել և նրանից օգտվել է այնպիսի խիստ հերթականությամբ, որ կարելի է առանց չափազանցության ասել, որ եթե այժմ որե՛կ մեկը կրկին նրա աշխատանքը՝ կատանա միևնույն ցանկը:

Այս տեսակետից առանձնապես բնորոշ է «Տիեզերական պատմության» 30 և 31 էջերի օգտագործումը: Առաջինում կա ցանկի համար սխալների ընդամենը

մեկ տեղեկություն (հայտնիում է, որ Արշակ Մեծը «թագաւորեցոյց զեղրայր իւր զՎաղարշակ ի վերայ աշխարհիս Հայոց»), մնացածն ամբողջությամբ նկարագրական բնույթ ունի: Գլխի հեղինակն այս ամբողջ էջից վերցրել է միայն այդ տեղեկությունը: Դրան հակառակ, հաջորդ էջն ամբողջությամբ, սկզբի բառից մինչև վերջինը, մի պատրաստի ժամանակագրական ցանկ է, որը և Գլխի հեղինակն արտագրել է առանց մի բառ բաց թողնելու: Սա հեղինակի մտադրությունը բացահայտող բնորոշ փաստ է:

Այս հանգամանքը վերաբերում է Մանփանոս Մալխասյանցի ուշագրությունից և նա անհատականալի է համարել, թե ինչու Գլխի հեղինակն Աստղիկին արտագրելիս պետք է բաց թողած լիներ հիշյալ նկարագրական մանրամասնությունները: «Անհատականալի կմնար,—գրում է նա,—թե ինչու այս հեղինակը յուր բնագիրը Աստղիկից արտագրելիս դուրս է գցել վերահիշյալ կտորները»:

Նրա կարծիքով՝ ավելի հավանալի կլիներ, եթե արտագրողը փոխանակ կտորները բաց թողնելու, ընդհանրապես, ընդարձակեր իր ակզնագրյուրը: Եվ քանի որ Աստղիկի բնագիրը Գլխի համեմատությամբ ավելի ընդարձակ է, ուստի Մալխասյանցը ենթադրել է, թե արտագրողը Աստղիկն է:

Եթե համառանք այս ենթադրությանը՝ ստիպված պետք է լինենք Աստղիկին վերագրել մի շատ տարօրինակ աշխատանք, նա էր Գլխից վերցրած լուրաքանչյուր նախադասություն մասնատել է մի քանի մասերի և նրանցում մեջընդմեջ ավելացրել Մովսես Խորենացուց և Նվսերիոս Գևորգացուց վերցրած տեղեկություններ: Այսպես, օրինակ, Մալխասյանցը գտնում է, որ Աստղիկը Գլխից վերցրել է ասորի բերվող նախադասությունը և բաժանելով երեք մասի՝ նրանցից առաջ և հետո ավելացրել է երեք հատված (կարծեցյալ ներմուծումներն ընդգծում ենք):

Գլխի

Աստղիկ

Յետ մահուանն Աղնբաանդրու

Թագաւորէ Արշակ քաջ ի Բահլ
Շահաստանի յերկիրն Քուշանաց
կեցեալ ամս ճէ,

Թագաւորեաց ամս Ծէ²⁹

Եւ եղև ի ժԱ ամին սորա (Անտիոխայ Թէոսի) և ի Կ ամի զկնի վախճանին Աղեքսանդրի Ապոտամբեցին Պարբեհ ի ծառայութենէ Մակեդոնացուց և:

Թագաւորէ ի վերայ նոցա Արշակ քաջ ի Բահլ Շահաստանի յերկիրն Քուշանաց: Եւ րափէ գամենայն կողմանս Արևելից և տալ պատերազմ սաստիկ յով: Հալածէ և ի Բարեյունէ զՄակեդոնացուց իշխանութիւնն և:

Թագաւորեաց ընդ ամենայն ամս Ծէ:

Տեսնում ենք, որ արտագրողը Գլխի հեղինակն է:

Մալխասյանցի աչքից վրիպել է ևս մի կարևոր հանգամանք, այն է՝ պարթև թագավորների ցանկն Աստղիկի մոտ գտնվում է «Տիեզերական պատմության» նախապատրաստական մասում, որտեղ հեղինակը անխափա համառոտագրում

²⁸ Սա. Մալխասյանց, Ներկոսի Պատմությունը և Մ. Խորենացի, էջ 28:

²⁹ Նույն տեղում, էջ 23—24:

է իր սկզբնաղբյուրները և կազմում մի հակիրճ ժամանակագրություն՝ ձեռքում
 եղած տասնյակ էջերից երբեմն վերցնելով մեկ կամ երկու տվյալ:

Ահա այս պարագաներում նա չէր կարող Ի զլխի նկատմամբ կիրառել
 բոլորովին հակառակ գործողություն և ոչ միայն այն արտադրել ամբողջու-
 թյամբ, այլև՝ նրա մեջ հավելումներ կատարել:

Վերը բերված օրինակում Ասողիկն ըստ Մալխասյանցի՝ Գ զլխից վերց-
 րել է 4 տողանոց մի տեղեկություն Արշակ քաջի մասին և երեք մասի ծվատե-
 լով դարձրել է 13 տողանոց մի բնագիր: Սա անհնարին է ոչ միայն այն պատ-
 ճառով, որ «Տիեզերական պատմության» տվյալ մասում Ասողիկը, մեր ասածի
 համաձայն, միայն և միայն նամանուսագրում է իր սկզբնաղբյուրները, այլև
 այն պատճառով, որ նա պարթևաց ցանկը կազմելու համար Ի զլխին դիմելու
 ոչ մի կարիք չուներ, որովհետև բոլոր այն տեղեկությունները, որ նա պետք է
 քաղեր այնտեղից՝ կարող էր գտնել նույն հորինացու մոտ, որին նա դիմել է
 ցանկի հիմնական տեղեկությունները քաղելու համար:

Մալխասյանցի կարծիքով Ասողիկն ընդարձակել է նաև Ի զլխի հետևյալ
 հատվածը.

Դ զլուխ	Ասողիկ
Զսա սղանեալ Ստահրացուն	1. Զսա սղանեալ Ստահրացուն
Արտաշրի որդու Սասանայ	2. Արտաշրի որդու Սասանայ
Երարձ գտէրութիւն Պահլավկաց	3. Երարձ գտէրութիւն Պահլավկաց
	4. յերկրորդ ամին Փիլիպպեայ
	5. րագաւորին Հոռմայ: Աստաճօր
	6. դադարէ րագաւորութիւնն Պար-
	7. րեւաց յազգէն Պահլավկաց.
սկսեալ յերեսուն ամի թագաւորու-	8. սկսեալ յերեսուն ամի թագա-
թեանն Փիլեղելփոս Պտղոմէոսի, կա-	9. տրութեան Փիլիպպիոս Պտղո-
լեալ նոցա բնդ ամենայն ամսի նԾ է:	10. մէոսի, կալեալ սոցա բնդ ամե-
	11. նայն ամս նԾ է:

Դժվար չէ նկատել, որ այստեղ գործ ունենք սոսկ զրչական մի վրիպակի
 հետ. Ի զլխի հեղինակը կամ նրան ընդօրինակող գրիչը ձեռագիրն արտադրե-
 լիս սխալմամբ բաց է թողել ընդգծված տողերը: Վրիպումը տեղի է ունեցել
 3-րդ և 7-րդ տողերում հանդիպող միեւնոյն Պահլավկաց բառի պատճառով:
 3-րդ տողի Պահլավկաց բառն արտադրելուց հետո կրկին ձեռագիրն անդրա-
 դառնալիս գրիչը նկատել է 7-րդ տողի միեւնոյն բառը և կարծելով, թե այն
 արդեն արտադրել է՝ շարունակել է ընդօրինակել այդ բառից հետո եկող տո-
 ղերը. այսպիսով նա բաց է թողել 3-րդ և 7-րդ տողերի միջև ընկած բնագիրը:

Այս կարգի վրիպումները սովորական են և հանդիպում են «Արեւոսի
 Պատմության» նաև այլ հատվածներում: Մեզ հաջողվել է ձեռագրերում հայտ-
 նաբերել և լրացնել մի քանի նման բացթողումներ: Այսպես, օրինակ, հայկա-
 կան ամենահին թղթյա ձեռագրում (Մատենադարանի ձեռագիր № 2679, ընդօ-
 րինակված 981 թ.) պահպանվել է «Արեւոսի Պատմության» մի հատվածը, որը
 համապատասխանում է տպագիր բնագրի (1939 թ. հրատարակություն) 135
 էջին: Այս էջում բնագիրը մի տեղ պակաս է, որը առիթ է առնել վանազան են-

թաղրություններին³⁰։ Իրականում, սակայն, տեղի է ունեցել միևնույն գրչական սխալը. բաց է թողնված գաղափար օրինակից երկու տող։ Ահա այդ տողերը (ընդգծում ենք), որ դռնում ենք թղթյա հնագույն ձևագրում.

Իզրուա հնագույն ձևագիր

(թ. 192ա)

1. զիա րդ ոչ գողումն կալցի
2. զճաշակողն՝ ի հուրն կենդա-
3. նի աներկիւղարար մերձենալ
4. զոր ոչ Աւրովբէն իսկ ձե-
5. ոովք համարձակէր մերձենալ.
6. այլ ունելեալ և ոչ մարդարէն...

«Աւերեսի Պատմութիւն»

(էջ 135)

- զիար դ ոչ գողումն կալաւ
- զճաշակողն՝ ի հուրն կենդա-
- նի աներկիւղարար մերձենալ
- այլ ունելեալ և ոչ մարդարէն...

Այստեղ բացթողումը կատարվել է 3-րդ և 5-րդ տողերը եղրափակող միևնույն մերձենալ բառի պատճառով։

«Աւերեսի Պատմութիւն» տպագիր բնագրի մեկ այլ հատվածում (էջ 120) պակասող չորս տող պահպանվել է մեր Մատենադարանում պահվող մի ձևագրական պատճառիկում (պատճառիկ N 1343)³¹.

Պատմութիւ

«Աւերեսի Պատմութիւն», էջ 120

- | | |
|--------------------------------------|-------------------------------------|
| 1. լաւ համարեցաւ տա, սակ և | լաւ համարեցաւ տալ սակ և |
| 2. առնել հաշտութիւն պատգամաւորաւ | առնել հաշտութիւն պատգամաւորաւք |
| 3. և մնալ ժամանակի իւրում զի քերես | |
| 4. և աստուծոյ հաշտութեամբ հալեացի | |
| 5. քերկիւր և ոչորմեացի հոգաւ և սկսաւ | |
| 6. խաւսել ի հաշտութիւն պատգամաւորաւ | |
| 7. և փութացուցանէին իսմայէլացիքն | ...և փութացուցանէին իսմայէլացիքն... |

Այստեղ նույնպէս գործ ունենք միևնույն բառի (2-րդ և 6-րդ տողերը եղրափակող պատգամաւորաւ բառի) պատճառով տեղի ունեցած բացթողման հետ։

Նույն պատճառիկում պահպանվել են տպագիր բնագրում (էջ 119) պակասող ևս երկու տող.

30 Հմմտ. «Աւերեսի Եպ. Պատմութիւն», էջ 195, ծան. 70։

31 «Աւերեսի Պատմութիւն» այս պատճառիկը, որ մեր կարծիքով պատկանել է Ժն—ԺՂ դարերում ընդօրինակված մի ձևագրի, պատճառիկների գույքամատչանում սխալմամբ գրանցված է Եղել Ղևոնդ պատմիչի անվան տակ։ Նախկին բիրիւղորաֆների այս վրիպումն ուղղված է Նոր գույքամատչանում (որը կազմել է Ս. Քուանթյանը)։

Պատարիկ

«Արևոսի Պատմություն», էջ 119

Եւ եղև ի վաղիւն
առաւաւտին եկն եհաս ի
վերայ նոցա զօրաւարն Հայոց
Թէոդորոս զաւրու իւրով
և յարձակեցաւ ի վերայ նոցա
և եհար զնոսա անհուն կոտորածով...

Եւ եղև ի վաղիւ
առաւաւտուն եկն եհաս ի
վերայ նոցա զաւրաւարն Հայոց

և եհար զնոսա անհուն կոտորածով...

Այստեղ բացթողումը կատարվել է նույնիսկ առանց միևնույն բառով պայմանավորված լինելու: Ի դեպ, պատարիկում պահպանված տողերից հայտնի է դառնում հայոց զորավարի անունը՝ Թեոդորոս:

Թվում է, բերված փաստերը բավական են՝ համոզելու համար, որ պարթևների ցանկը Ասողիկը կազմել է խորենացու և ոչ՝ «Արևոսի պատմության» թյուրիմացարար կցված Գ զլխի հիման վրա:

Վերջապես այդ մասին հայտնում է հենց ինքը՝ Ասողիկը: Անդրադառնալով ցանկում հիշատակվող Արշակ քաջին՝ նա գրում է. «Այլ որ ինչ ի թագաւորութենէն Արշակայ քաջի»³² մինչև ցայսր ասացաւ՝ ի մեծ, պատմագրէն Մովսիս, Տարոնացոյ Բագրեանդայ և Արշարունեաց Լուսկոյոսէ է...»³³:

Բանասիրության ուղղորդված լինելը միայն փաստը վերջնականապես լուծում է հարցը և ցույց տալիս, որ թյուրիմացարար Արևոսին վերադրվող Պատմությունում զետեղված պարթև թագավորների ցանկը քաղված է Ասողիկից, որն իր հերթին ցանկը կազմել է խորենացու և նվաճելու Կեսարացու հիման վրա:

Գարեկի է «Տիեզերական պատմությունում» ցույց տալ նաև մի շարք կողմնակի տեղեկություններ, որոնցից երևում է, որ Ասողիկը առհասարակ տեղյակ չի եղել «Արևոսի Պատմության» կցված այն դուխներին, որոնցում հանդիպում է պարթևների ցանկը (իմա՝ Ա—Գ դուխները): Այսպես օրինակ, ըստ Ասողիկի՝ Պարթևաց թագավորության տեղությունը կազմում է 457 տարի, մինչդեռ Գ զլխում 573 տարի է, Ասողիկի համաձայն՝ այդ թագավորության բարձումը տեղի է ունեցել Փիլիպպոս կայսեր օրոք, իսկ Գ զլխում՝ Եղիանոսի, ըստ Ասողիկի՝ Սասանյան թագավոր Պերոլին հաջորդել է Վաղարշը, մինչդեռ Գ զլխի հեղինակը Վաղարշի փոխարեն նշում է Ջամասպին, Ասողիկը Սասանյան թագավորության վերացման տարին նշում է բյուզանդական կայսր Հերակլի 18-րդ տարում (628 թ.), Գ զլխի հեղինակը՝ Կոստանդ կայսեր 12-րդ տարում (653 թ.) և այլն³⁴:

Մենք չենք կասկածում, որ եթե Գ զլխը հայտնի լիներ Ասողիկին՝ նա անպայման «Տիեզերական պատմության» առաջին դիտում ի շարս իրեն հայտնի մյուս պատմիչների կնշեր նաև իր անուն-ազգանունը կրող Ստեփանոս Տարոնացուն, որը Գ զլխի խորագրում նշված է որպես մի նշանավոր «հաւասար»:

³² Արշակ քաջի մասին առաջին տեղեկությունը Ասողիկի մատչելի է հանդիպում է Գ զլխում, այսինքն այստեղ, որտեղ գտնվում է պարթևների ցանկը:

³³ «Ստեփանոսի Տարոնացոյ Ասողիկան Պատմութիւն Տիեզերական», էջ 53:

³⁴ Այլ անհամաձայնություններ նշել են նաև Հ. Հյուբշմանը՝ Zur Geschichte Armeniens... Leipzig, 1875, S. 6 ն. Աղոնցը՝ Науч. вест. Армении..., էջ 92 և ուրիշներ:

տի և ճշմարիտ» պատմիչ: Ասողիկն այնքան հայրենասեր տարոնացի է, որ նույնիսկ Խորենացուն Տարոնացի է կոչում, ուրեմն չէր զլանա նշելու նաև այս «նորահայտ» Տարոնացուն:

«Սերերսի Պատմությանը» հետագայում միացած Գ զխում գտնվող պարթև թագավորների ընդամենը մեկ-երկու էջանոց ցանկում այնքան խիտ են Ասողիկի ուրույն լեզուն ու ոճը ցույց տվող փաստերը, որ նրանց նմանները կարելի է ցույց տալ «Տիեզերական պատմության» մի քանի այլ հատվածներում:

«Տիեզ. Պատմ.», էջ 31

Աստանօր դադարէ թագաւորութիւնն
Պարսեաց յազգէն Պահլաւկաց
սկսեալ յէ ամի թագաւորութեան
Փիլիպպիոս Պտղոմէոսի
կալեալ սոցա ընդ ամենայն
ամս ՆՄ է:

էջ 77

Աստանօր դադարէ թագաւորութիւնն
Հայոց յազգէն Արշակունեաց,
Սկսեալ յԺԴ ամի երկրորդ Եւերգեստէս
Պտղոմէոսի թագաւորի եգիպտացոց
և դադարեալ ի ԻԴ ամին Թէոդոսի
թագաւորին Յունաց
կեցեալ ընդ ամենայն թագաւորութեան
Հայոց ամս ՇԾԹ:

էջ 117

Աստանօր դադարէ թագաւորութիւնն
Պարսից յազգէն Սասանայ
սկսեալ յերրորդ ամի
Փիլիպպիոսի թագաւորի Հռոմայ
և դադարեալ յԺԸ ամի Հերակլէսի ի
յՉն թուականին
կալեալ ընդ ամենայն ղթագաւորութիւն
Պարսից ազգին Սասանեան ամս 329:

Երեք դեպքում էլ Ասողիկը միենույն ձևով է կազմել իր ժամանակագրությունը: Հայոց Արշակունի հարստության և պարսից սասանյան թագավորության բարձման մասին նա հայտնում է ճիշտ նույն ձևով, ինչպես նշել է Պարթևաց ցանկում պահպանված թագավորության բարձման մասին: Սա ժամանակագրություն կազմելու Ասողիկյան եղանակ է:

Միևնույն երևույթին ենթ հանդիպում նաև հետևյալ հատվածներում.

«Տիեզ. Պատմ.», էջ 31

Զսա սպանեալ Ստահրացոյն Արտաշրի
Որդոյ Սասանայ Երարձ գտերութիւն, Պահլաւկաց
յերկրորդ ամին Փիլիպպեայ թագաւորին Հռոմայ:

էջ 16

Զսա սպանեալ Աղեքսանդրի
Ի վեցերորդ ամի թագաւորութեանն
Իւրոյ՝
Երարձ ղՊարսից թագաւորութիւնն
որ տեւալ ամս ՄԷ:

էջ 28

Զսա սպանեալ Աղեքսանդրի Մակեդոնացոյ
Փիլիպպեայ (որդոյ) միանգամայն
Պարսից և Ասորեստանեայց թագաւորութեանն
տիրեաց ամս Զ:

Ասողիկին բնորոշող արտահայտություններից մեկն է նաև Պարթևաց ցանկում հանդիպող «ձև օրինակի» արտահայտությունը, որը նա գործածում է հավանաբար նվաճելու կենսարար հայերեն թարգմանության ազդեցությամբ (որտեղից նա բաղմամբով տեղեկություններ է բաղել) և որը հազվագեղ է մյուս պատմիչների մոտ:

«Տիւ. Պատմ.», էջ 31

Եւ յետ նորա պայազատք նորին
զոյն ձև օրինակի:

էջ 7

Ընդ որ թուեն
զայս ձև օրինակի

էջ 8

զոր և իսկ թուեն
զայս ձև օրինակի

էջ 24

զնա ասեն շինել
զայս ձև օրինակի

էջ 27

զայսչափ ժամանակս թուեալ
զայս ձև օրինակի

Եզրակացություն. Պարթևաց ցանկի մանրակրկիտ բնագրական քննությունը և հոգվածում բերված մյուս փաստերը անառարկելիորեն ապացուցում են, որ Սեբեոսին վերագրվող Պատմության ներկա բնագրում ղեկավարած հիշյալ ցանկն արտադրված է ժ.Ա դարի պատմիչ Ստեփանոս Տարոնացու (Ասողիկի) «Տիեզերական պատմությունից», ուստի և սխալմամբ է կցված է դարում հորինված «Սեբեոսի Պատմությունը»: Ցանկը պարունակող 7 գլուխը (իրեն նախորդող երկու և հաջորդ՝ Դ գլխի հետ միասին) գրված է Ասողիկից հետո:

Ստեփանոս Տարոնացու անունը կրող Գ գլուխը թյուրիմացաբար գտնվելով «Սեբեոսի Պատմությունում» առիթ է տվել բանասերներին՝ կյանքի կոչելու մի նոր՝ անիրական Ստեփանոս Տարոնացու, որն իրր ապրել է է դարից առաջ և որից իրր օգտվել է Սեբեոսը:

Միջնադարյան մատենագետներն ու պատմիչները, առանց խտրության, բոլորն էլ ավելի ճիշտ ընկալելով Ստեփանոս Տարոնացու անունը կրող բնագիրը՝ այն համարել են Ասողիկից քաղված հատված: Այդ է պատճառը, որ այն մատենագիտական բնագրերից և ոչ մեկում, ինչպես նաև ոչ մի պատմիչի մոտ չենք հանդիպում Ասողիկից պատմել ուրիշ Ստեփանոս Տարոնացու անվան:

Ստեփանոս Տարոնացու անունը Սեբեոսին վերագրվող Պատմությունում գտնվում է այնպիսի մի երևելի տեղում (խորագրում) և այնպիսի մի ձևով (պատմահայր Մովսես Խորենացու կողմին, որպես նրան հավասար «հաւաստի և ճշմարիտ» մատենագիր), որ երկար դարերի ընթացքում չէր կարող չնկատվել ու չնշվել որեւէ մատենագրի կողմից:

СТЕПАНОС ТАРОНАЦИ И СТЕПАНОС ТАРОНАЦИ
АСОХИК — ОДНА И ТА ЖЕ ЛИЧНОСТЬ

Г. В. АБГАРЯН

(Р е з ю м е)

Среди средневековых армянских историков упоминается писатель по имени Степанос Таронаци, живший, по мнению некоторых ученых, до VII в. Главным литературным памятником, служившим основой для утверждения такого мнения, является «История Себеоса» (VII в.). В заглавии третьей главы этого широко известного первоисточника по истории Ближнего Востока и Византии автор, обращаясь к некоему «любителю чтения», говорит: «Теперь если угодно тебе... я повторю по истории Мовсеса Хоренаци и Степаноса Таронаци». На основании этого ряд специалистов предполагал, что названный в заглавии Степанос Таронаци жил до создания «Истории Себеоса», т. е. до VII в. Одновременно высказывалось другое мнение, согласно которому Степанос Таронаци — не кто иной, как историк XI в. Степанос Таронаци (по прозвищу Асохик).

В современной филологии общепринятым является мнение о том, что Степанос Таронаци — не Асохик, а более древний автор, сочинение которого считается утраченным.

Решение задачи приобретает особо важное значение в аспекте определения первоначального текста и начальных границ «Истории Себеоса» — классического произведения средневековой армянской историографии. Вопрос частично связан также с именем Мовсеса Хоренаци.

Анализ третьей главы «Истории Себеоса» и соответствующего отрывка из «Всеобщей истории» Асохика приводит к заключению, что первые четыре главы «Истории Себеоса» присоединены к этой истории после XI в. Анонимный автор этих глав пользовался трудом Степаноса Таронаци Асохика, которого и упоминает в третьей главе.

Таким образом, мнимый Степанос Таронаци, «живший до VII века», лишается опоры в «Истории Себеоса» и отождествляется с видным историком начала XI в. Степаносом Таронаци Асохиком.